

# Վ Ա Ր Ք

## Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

(Շար. տես «Բազմավեպ» 1964, քիւ 7-9, էջ 182)

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՅ ԲԱԺՆԻ ՀԱՅՈՑ

Մաշտոցի առաքելութիւնը Վրաստանի կողմերը եւ անկէ վերադարձը Հայաստան, առանց մնալու Գարգաման Զոր եւ Տաշիրք, որոնք իր ճամբու վրայ կը դըտնուէին, եւ երկրորդ անգամին միայն պիտի արժանանային Մաշտոցի այցելութեան, անշուշտ տարօրինակ կը թուէր ու եւէ ուսումնասէրի: Ակինեան, այս պարագային, չի վարանիր բնադրական փոփոխութիւններ կատարել, աւելի տրամաբանական կարգ մը դնելու համար Մաշտոցի ուղեւորութեան ընթացքին, ինչպէս նախապէս տեսանք: Բայց մեզի համար չէ՛ր հանէ բնադրական խանգարումի ենթադրութիւնը, քան Մաշտոցի այս ընթացքը: Եթէ Մաշտոց Վրաստանէն կը վերադառնայ որոշ փութկոտութեամբ մը, անշուշտ ունեցած է իր պատճառը, զոր Կորիւն, իր սովորութեան համեմատ, զանց ըրած է նշանակել:

Կորիւնի պատմածին մէջ՝ Մաշտոցի Վրաստանէն վերադարձին՝ հետեւեալ բացատրութիւնը ունինք. «Իսկ իբրեւ ընդամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործաստուածապաշտութեան, այնուհետեւ հըրաժարեալ ի նոցանէ զառնայր յերկիրն Հայոց, եւ պատահեալ Սահակայ Կաթողիկոսին Հայոց, պատմէր նմա զողջութեանէ եղելոցն»<sup>187</sup>: Հոս աչքի կը զարնէ որ Մաշտոց իր վերադարձին՝ միայն Կաթողիկոսին հանդիպած է եւ չէ յիշուած նաեւ Հայոց թագաւորը, ինչպէս յիշատակուած կը գտնենք Եղեալայէն վերադար-

ձին, եւ աւելի ուշ՝ Յունաց բաժնի Հայաստանէն դարձին: Առաջին անգամին՝ Վրամշտոցութեան թագաւորին, վերջին անգամին ալ Արտաշէս թագաւորին կը հանդիպի: Իսկ այս անգամ՝ Վրաստանէն վերադարձին, միայն կաթողիկոսը կը դառնայ: Պարզ է որ այս անգամ Հայաստան քաղաքական նոր պայմաններու մէջ կը գտնուէր: Աւելորդ է Կորիւնէն սպասել որեւէ տեղեկութիւն այդ մասին, ինչպէս միշտ: Բարեբախտաբար Մ. Խորենացի այս շրջանի պատմական դէպքերը որոշ մանրամասնութեամբ կը պատմէ: Մեր պատմահօր համաձայն՝ Վրամշտոցութեան, յետ քրտան եւ մէկ տարի թագաւորելու, կը վախճանի. անոր կը յաջորդէ Խորենացի, որ Մ. Սահակի միջնորդութեամբ՝ Պարսկաստանէն կը վերադառնայ, ազատած իր երկարամեայ բանտարկութենէն, եւ տարի մը միայն կը նստի Հայոց զահին վրայ: Յադկերտ, հայ նախարարներու խնդրանքին վրայ, անոնց թագաւոր կը նշանակէ իր որդին Շապուհ, որ «Զքառեամ անարգաբար թագաւորեալ, հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն եւ զնայ փութանակի»<sup>188</sup>: Շապուհի հայրը, Յադկերտ Ա. կը մեռնի 421ին. ուստի Շապուհի քառամեայ թագաւորութեան շրջանը զետեղելու ենք 417-421ին. Խորենացի տարուան մը թագաւորութիւնը՝ 416ին. հետեւաբար, Վրամշտոցութեան մահը պէտք է պատահած ըլլայ 415/6ին: Մաշտոց այդ առթիւ վերադար-

187. ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, էջ 64:

188. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, Ժգ:

ձած ըլլալու է Վրաստանէն: Մ. Սահակ այդ տարին Պարսկաստան երթալով՝ յաջողուցած է Խորենացիի ազատութիւնը եւ թագաւորական զահին վրայ վերահաստատութիւն: Մաշտոց նոյն շրջանին Հայաստանի զաւառներուն մէջ չըջելով՝ կը հաստատէր իր իսկ հիմնած դպրոցները: Բայց Շապուհի թագաւորութեան խառնակ շրջանին, ըստ մեր պատմահօր ըսածին, Մ. Սահակ եւ Մաշտոց կ'անցնին Յունաց բաժնի Հայաստանը. «Իսկ իբրեւ ետես Մեծն Սահակ զնյոս ամենայն չարիս ի մասինն Պարսից, զնաց նա զկողմամբք արեւմտից մերոյ աշխարհիս ի բաժին մասինն Յունաց»<sup>189</sup>: Մինչդեռ Կորիւն բոլորովին լուրթեամբ անցնելով քաղաքական անցքերու վրայէն, Մաշտոցի Յունաց բաժնի երթալու պարագան կը կապէ նախորդ պատմածներուն՝ հետեւեալ բացատրութեամբ. «Խորհուրդ առնոյին այնուհետեւ վասն կէս աղբին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ զնայր հանդերձ աշակերտօք բազմօք ի կողման Յունաց»<sup>190</sup>: Մ. Խորենացիի համաձայն՝ Սահակ Յունաց բաժնի մէջ «Ոչ ըստ արժանեաց ընկալեալ եղեւ». ուստի Բիւզանդիոն կը զրկէր Մաշտոց եւ իր թող Վարդան, երեք նամակներով. մին ուղղուած Թէոփոս կայսեր, որմէ կը խնդրէր Յունաց բաժնի Հայաստանի մէջ հայոց զրբու ուսուցման հըրամանը. երկրորդը՝ Ատտիկոս Պատրիարքին, խնդրելով որ ձեռնուի ըլլայ Մաշտոցին, կատարուած խնդրանքին ստացումին համար. հուսկ երրորդը՝ Անատոլիոս զօրավարին, որպէսզի ան ալ օժանդակէ Մաշտոցի՝ անոր ճամբորդութեան ընթացքին: Թէ Խորենացիի այս նամակները պարզապէս զրական կեղծիքներ են, ընդունուած ժամանակի պատմագրութեան մէջ, հարկ չկայ ապացոյցի: Բայց թէ Խորենացի այս մասը չարադրած առանձն աչքի տակ ունեցած է Կորիւնի վարքը եւ զայն ջանացած է իր պատմական հասկացողութեամբ մեկնաբանել, այդ ալ կը տեսնուի երկու հեղինակներու համեմատութենէն:

Կորիւնի համաձայն, երբ Մաշտոց կ'անցնի Յունաց բաժնի Հայաստանը, հոն պատուով կ'ընդունուի թէ՛ տեղացի իշխաններէ եւ թէ՛ եպիսկոպոսներէն, անոնց մօտ արդէն տարածուած բարի համբաւին համար. եւ մանաւանդ տեղւոյն սպայապետէն, որ Անատոլ (կամ Անտիօք) կը կոչուէր: «Եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն զնմանէ անդ ի հիւսիսական կողմանց հուսկեղոց, առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի զաւառականաց պատուեալ լինէր, մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատոլիս, ի մուտ ճանապարհին»<sup>191</sup>: Կորիւնի այս հատուածը, ինչպէս Մ. Խորենացի, այսպէս ներկայ բանասէրները աշխատած են մեկնաբանել: Մ. Ղազարու հրատարակիչները բնագրին Անտիոյ անունը սրբադրած են Անատոլիս, ծանօթութեան մէջ դնելով հետեւեալ տարբերակները. «Յօրինակին. Անտիոյ. եւ միւս Անտիսի. բայց Խորենացին Անատոլ ասէ»<sup>192</sup>:

Փնտրելեան իր հրատարակութեան մէջ ընդհանառակն պաշտպանած է Անտիոյ ընթերցումը, հիմնուելով Անտիօքոս անունին զօրածական ըլլալուն բիւզանդացւոյ քով: Բայց «ի մուտ ֆանապարհիլ» բացատրութիւնը հասկցած է իբրեւ Անտիօք քաղաքը, որ իբրեւ Բիւզանդիոնի ճամբու մուտքը նկատուած ըլլալու էր. որով եւ Անտիօքոս զօրավարը պէտք էր Անտիօք քաղաքը գտնուէր<sup>193</sup>:

Նոյն տարին Բազմավեպի մէջ, Հ. Յ. Թորոսեան, ընդգրկմանալով Փնտրելեանի, պաշտպանած է Կորիւնի առաջին հրատարակիչներուն սրբադրութիւնը. եւ առաջարկած նոյն բնագրին նոր ընթերցում. «Մանաւանդ ի սպայապետէն աշխարհին,

189. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, Ժէ:

190. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ. էջ 64:

191. Աճգ:

192. ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, հրատ. Վենետիկ, 1894, էջ 27, Ծն. 1:

193. ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, հրատ. Փնտրելեան, Երուսաղէմ, 1936, էջ 35, Ծն. 521:

որ անուանեալ կոչէր Անատոլիս, ի քաղաքին Անտիոք, խոստանայր լինել ձեռնադրու ճանապարհին<sup>194</sup>։ Այս նոր ընթերցումին համաձայն «ի մուտ քաղաքին» եղած է «ձեռնադրու քաղաքին» եւ աւելցրած են ընդգծուած բառերը։ Ասով Թրուսիայի եկեղեցիները թէ Մաշտոց Յուսէպ քաթինը մասնէ կտք՝ Անտիոք գացած ըլլալու էր, տեսնուելու համար տեղւոյն զօրավարին հետ եւ անկէ մեկնած դէպի Բիւզանդիոն, աւելի եւս շեշտուած ու ճշտուած է. այն առաւելութեամբ, որ Անտիոք նստող զօրավարը, իսկապէս Անատոլ Արեւելից զօրավարն էր, պատմութեան մէջ յայտնի դէմք<sup>195</sup>։

Ակնհեան, 1936ին, ընդունելով Անատոլիս անուան սրբազրուութիւնը, ուղեց սրբազրու նաեւ «ի մուտ քաղաքին» բառերը, առաջարկելով «ի Դերքան քաղաքին»։ 1949ին կատարած քննական հրատարակութեան մէջ ալ թէեւ պահած է «ի մուտ քաղաքին» ընթերցումը, սակայն ծանոթութեանց բաժնին մէջ<sup>196</sup> կը համարէ թէ Մաշտոց Անատոլ զօրավարին հետ իր տեսակցութիւնը ունեցած է Դերքան քաղաքի մօտերը, եկեղեցիով անշուշտ որ Անատոլ զօրավարը այդ ժամանակ Դերքան գտնուած է. դուրսէ ազդուած Մ. Խորենացիի մէկ բացատրութենէն, թէ

«Եկեալ Մեսրոպայ եւ Վարդանայ ստրատելատի (ի Բիւզանդիոնէ) գտին զօրավարն Անատոլ հուպ ի մերս եկեալ սահման»<sup>197</sup>։ Սակայն այս բոլոր հեղինակները իրենց տուած մեկնութեանց մէջ կը մոռնան Կորիւնի գրածներուն ամբողջական պարագաները նկատի առնել։ Կորիւն կը խօսի Մաշտոցի Յուսէպ քաթին երթալու մասին եւ նոյն աշխարհին սպայապետին վրայ, որ Անտիոք կը կոչուէր. եւ ոչ թէ Անտիոք քաղաքը նստող Անատոլ Արեւելից զօրավարի մասին։

Արեւեան ալ իր քննական հրատարակութեան մէջ որդեգրած է Անատոլիս ընթերցումը տարբերակներու բաժնին մէջ նշելով հետեւեալը. bc. Անատոլ, d. Անտիոք, a. Անտիոք. Վ. Անտիոք, e. Անտիոք. ուղղ. Անատոլիս<sup>198</sup>։ Տարբերակներու այս պատկերէն կը հետեւի որ հնագոյն ձեռագիրները bc ունին Անատոլ. մնացեալները, որոնք ուղղակի կամ անուղղակի յիշեալ երկուքէն կախում ունին, սխալ արտագրութեամբ տուած են մեղի Անտիոք, Անտիոք, Անտիոք եւ Անտիոք ընթերցումները։ Այս ընթերցումները կ'ենթադրեն որ մայր գաղափարը, որմէ արտագրուած էին՝ դէշ նոտագիրը մը եղած ըլլայ, ուր Անատոլ անուան մէջ ա-տ, տ-ի, ո-ս, կարգացուած էր եւ ղ-f կամ

է երեք նոյն տեսակ 22.

1) Մատ. Ս. Ղազ. Թ. 404, զր. էջմիածին, Գեորգ Դպիր Տէր-Յովհան. 1781-ին։

2) Մատ. Ս. Ղազ. Թ. 1088, զր. էջմիածին, Գեորգ Դպիր Տէր-Յովհան. 1781-ին։

3) Մատ. Ս. Ղազ. Թ. 129, նոտագիր թիւէն եղած օրինակներէն մը, ի Ս. Ղազար։

Վ. - Հրտ. Վենետիկ, 1894. ստորեւ նշանակուած միւս օրինակը, որ կը ներկայացնէ 4) Մատ. Ս. Ղազ. Թ. (Խմբ. Ժ. 6) 1827-ին եղած սրբազրուութիւն մը, համեմատ Պետրոս Մատիկեանի օրինակին, արտագրուած ի Կ. Պոլիս։

e - Երեւան Պետ. Մատ. Թ. 3143, զրուած 1828ին, Յովսէփ Բժշկեանէ, էջմիածին. Շեղագիր։

խ սրբազրուած։ Հետեւաբար Կորիւնի բրնայրին նախնական ընթերցումը եղած էր Անատոլ. մանաւանդ որ Մ. Խորենացիի քովն ալ Անատոլիոս անուան ներկայութիւնը նշան է թէ անիկա Կորիւնի մէջ տեսած էր այդ անունը, քանի որ Պատմահայրը հոս ալ Կորիւնի կը հետեւի իր պատմութիւնը գրած միջոց։

Այս Անատոլիոս զօրավարը, ինչպէս ըսինք, պատմութեան մէջ յայտնի դէմք էր, ծանօթ մեր պատմիչներուն ալ, ինչպէս Մ. Խորենացիի, նոյնպէս Եղիշէի եւ Ղ. Փարպեցիի։ Եղիշէ եւ Ղազար կը խօսին անոր վրայ՝ Վարդանանց պատմութեան ընթացքին։ Երբ Յաղկերտ Բ. դահ կը բարձրանայ (440), փոքր ընդհարում մը կ'ունենայ բիւզանդական բանակներուն դէմ, փորձելու համար անոնց քաղաքական ձգտումները. բայց Թէոփոս կայսր, «քանզի խաղաղասէր էր, կ'ըսէ Եղիշէ, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ Արեւելից, առաքեաց առ նա բազում դանձիւք»։ Իսկ երբ 450ին Հայերը Բիւզանդիոն պատուիրակներ զրկեցին՝ անոնց օգնութիւնը խնդրելու, այդ ժամանակ Թէոփոս կայսր կը յաջորդէր Մարկիանոս, որ «ի ձեռն վատթար արանց խրատաւորացն իւրոց ծառայիցն, Անատոլիայ, որ սպարապետն էր, եւ Եփրատիոս ասորի... ոչ կամէր անսալ միաբան ուխտին հաւատոց»<sup>199</sup>։ Ահա այս Անատոլ Արեւելից զօրավարն էր, որուն՝ Մ. Խորենացի կարծած է թէ զիմած ըլլայ Մ. Սահակ։

199. Եղիշէ, Պատմ. էջ 13, 134։

200. LABOURT, Le christianisme dans l'empire perse, Paris, 1904, էջ 117։

Ան ազդու նշանակած է TILLEMONT, Hist. Eccl. t, XII, p. 360. որ կը պատմէ յունական պատմիչներու վրայէն։ Լապոր Անատոլիոսը կը կոչէ Արեւելից հրամանատար, անշուշտ եկեղեցիով որ ան միշտ նոյն պաշտօնով զօրածն ըլլայ։ Մինչդեռ այդ թղտականին՝ գեռ այդ պաշտօնին հասած էր, այլ Հայաստանի կառավարիչն էր, ինչպէս կը հետեւի Կորիւնի վկայութենէն։

Օտար պատմիչներու քովն ալ Անատոլիոսի մասին ունինք տեղեկութիւններ, մանաւանդ այս ժամանակամիջոցին համար։ Յաղկերտ Ա. ի վերջին տարիներուն, Պարսկաստանի մէջ քրիստոնէից դէմ հալածանք մը ծայր տուաւ. Ասպահապետ անուն իշխան մը, որ հալածիչներէն մէկն էր, քրիստոնէայ եղաւ եւ ուրիշ քրիստոնեաներու հետ Հռոմէական սահմանները ապաւինեցաւ։ Հոս, Անատոլ պատրիկը զինքը ընդունեցաւ<sup>200</sup>։ Պարսից նոր արքան, Վաթ Ե. (421-438), պահանջեց Բիւզանդիոնի կայսրէն որ վերադարձնէ պարսիկ փախստականները. կայսրը ոչ միայն մերժեց, այլ պատերազմ բացաւ պարսից դէմ. 421ի ամառը, յոյներու Արգարուր զօրավարը Արգին կողմէն արշաւեց Պարսից սահմաններէն ներս. անոր դէմ ելաւ Միհր Ներսէս, որ պարտուեցաւ։ Պատերազմը շարունակուեցաւ տարի մը, առանց որոշ ելքի։ 422ին, Պրոկոպիոս զօրավարի յաղթանակով՝ Պարսից վրայ՝ պատերազմը զադրեցաւ եւ երկու կողմերը խաղաղութեան դաշինք կնքեցին<sup>201</sup>։ Այս դաշինքին համար՝ Անատոլ Պարսկաստան զրկուեցաւ իրր զեսպան<sup>202</sup>։

Անատոլիոս զօրավարի մասին գերմանական հանրագիտակը<sup>203</sup> հետեւեալ տեղեկութիւնները կու տայ. Ան 438ին արդէն կը տեսնուի իրրեւ Արեւելից զօրավար, կամ բիւզանդական եղբարանութեամբ՝ Magister utriusque militiae per Orientem. Իրրեւ զօրավար, ան չինել տուած է Անտիոքի մէջ կամարակապ սրահը, որ իր անունը կրեց։ 441ին Պարսից դէմ պատե-

201. STEIN E., Histoire du bas-empire, 1959, I, 280, n. (424) 142; 281. - LABOURT, Անդ էջ 118։

202. ԳԻՒՏԵՐԲԵՐԳ Կ., Հռոմէական Հայաստան և Հռոմէական Սատրապութիւնները Գ-Ձ դարերուն. (Թարգ. Հ. Մ. Նորբուհի) Վիեննա, 1914, Աղբ. Մատ. ՀԵ, էջ 43, ծն. 2։ Իրր ազդու նշանակուած է Թէոփոսէս, ժամանակագր. 84։

203. PAULY - WISSOWA, I, 2 (col. 2072) Անատոլիոս անունի տակ։

194. Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ, Բանի մը խնդրական կէտեր Կորնեան գրքին մէջ, «Բագմավէպ», 2թ (1931, էջ 468)։

195. Հմմտ. Ման. 203։

196. ԱԿԻՆԵԱՆ, Կորիւն՝ Վարդ Մաշտոցի, Հանդ. Ամս. 63 (1949), Թ. 4-12, էջ 304, Ծն. 59։

197. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմ. Գ, ծր։

198. Վարդ Մաշտոցի, էջ 64, Ծն. 24։ Ընթերցողին զիւրութեան համար մէջ կը բերենք 2 եռագիրներու ամբողջական ցուցակը։

b - Երեւան Պետ. Մատ. Թ. 2639, գրուած Ամրատու վանքում, 1672էն առաջ. բոլորովին։

c - Երեւան Պետ. Մատ. Թ. 1891, գրուած էջմիածին, 1774ին. նոտագիր։

d - Երեւան Պետ. Մատ. Թ. 131, գրուած էջմիածին, 1781ին, Համբարձում դպրէ. նոտագիր։

a - հրտ. Վենետիկ, 1894. որ օգտագործած

բաղմ ըրաւ. 446ին Բիւզանդիոն դնաց ու հոն Պատրիկի տիտղոսը ստացաւ եւ Magister militum praesentalisի պաշտօնը: 451ին ներկայ եղաւ Քաղկեդոնի ժողովքին եւ 452էն ետք տակաւին ողջ էր:

Մենք, ինչպէս ըսինք, Կորիւնի ըսածներէն կը հասկնանք որ Կորիւն Յունաց բաժնի Հայաստանի կառավարիչի մասին կը խօսի, երբ կ'ըսէ սպայապետ աշխարհին, կամ սպարապետ Հայոց<sup>204</sup>: Որովհետեւ Մաշտոց Յունաց բաժինը մտնելուն է որ կը հանդիպի Անատոլիոսի, Բիւզանդիոնէ վերադարձին ալ հոն հասնելուն է որ կը ներկայանայ Հայոց սպարապետին, որ հրաման ու հրահանգ կու տայ հայ մանուկներու հաւաքուելուն: Արդ Հայոց ըսպարապետը կամ սպայապետը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ 387ին Բիւզանդական իշխանութեան տակ անցած գաւառներուն կառավարիչը, հաստատուած Արշակ Դ. թագաւորի մահէն ետք: Այդ կառավարիչները Կոմէս տիտղոսը ունէին եւ ուղղակի կայսրէն կախում ունէին. բիւզանդական եղբարանութեան մէջ Magister militum ալ կը կոչուէին<sup>205</sup>: Իսկ պարսկական եղբարանութեան մէջ նոյն պաշտօնը Սպայապետ կը կոչուէր: Կորիւն այս բառով արտայայտած է իշխալ կառավարիչը, որ

մեր պատմական ուրիշ աղբիւրներու մէջ Կոմէս ալ կը կոչուէին<sup>206</sup>:

Յունաց բաժնի մէջ կային երկու տեսակ հայկական գաւառներ. անոնք որ Դիոկղէտիանոսի գաշինքով Անդրտիգրիսեան գաւառներ կամ Սատրապութիւններ կոչուեցան, եւ կը կառավարուէին տեղական իշխաններով, եւ Յովիանոսի գաշինքով վերածուեցան չորս գաւառներու՝ Ծովաց, Անգեղ տունն, Անձտայ եւ Մեծ-ծովաց<sup>207</sup>: Այս գաւառներուն վարչութիւնը զատ մընաց մինչեւ Յուստինիանոս: Եղիշէի ժամանակ ասոնք Ստորին Հայք յորջորջումն ունէին եւ անոնց սպարապետն էր Վասակ Մամիկոնեան<sup>208</sup>: Իսկ նոր գրաւուած գաւառները՝ Բարձր Հայք, Դարանաղիք, Եկեղեցի եւ Դերջան, պէտք էին կազմել Վերին Հայք, որ կը կառավարուէր Կոմէսներով, կամ Սպայապետով մը:

Ուստի Կորիւնի բնագրի Անատոլ ընթերցումը պահելով հանդերձ՝ կը մեկնենք հետեւեալ ձեւով. Մաշտոց Յունաց բաժինը մտնելով՝ կը հանդիպի Անատոլ սպայապետին, որ կը նստէր «ի մուտս փառապարիս», այսինքն Թէոդուլոսոյ բերդաքաղաքին մէջ, որ իսկապէս Հայաստանի սահմանադրութիւնը անցնելէ ետք՝ արքունական մեծ ճամբուն մուտքը կը կազմէ<sup>209</sup>: Հոս է որ Մաշտոց իր խնդիրքը կը

ներկայացնէ տեղական իշխանին. ան ալ Մաշտոցի խնդիրքը կը հաղորդէ Կայսեր, որուն անունը կ'ըսէ Կորիւն, Թէոդոս կը կոչուէր, որդին Արկադոս: Եւ կը շարունակէ. «Ուստի հրաման ելանէր վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ»<sup>210</sup>:

Դարձեալ Կորիւնի այս խօսքերը կը մընան մութ. եւ Մ. Խորենացին ու ներկայ բանասէրներ կը զիմեն մեկնաբանութիւններու՝ լուսաբանելու կամ տրամաբանական իմաստ մը տալու համար անոնց: Խորենացի տրամաբանական չի գտնէր որ Մաշտոց եկեղեցական պատուանուն մը ստանայ (Ակումիտ տիտղոսը) առանց կայսեր ներկայանալու, ուստի իր ոճով Կորիւնի պատմածները կը ձեւափոխէ, իրեն թէ Մաշտոց Բիւզանդիոն երթալէ ետք՝ Ատտիկոս Պատրիարքէն ստացած ըլլայ այդ պատուանունը. իր այս մեկնութիւնն ալ զբաղանք ձեւի դնելով՝ Ատտիկոս Պատրիարքին նամակ մը զրել կու տայ առ Մ. Սահակ, եւ որուն վերջաւորութեան կ'ըսէ. «Եւ դառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք ինեւ եկղեխատիկոս»<sup>211</sup>: Մինչ Թէոդոս կայսեր նամակին մէջ մեկնոյն զաղափարը հետեւեալ ձեւով կ'արտայայտուի. «Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդան, զորդի որդիացելոյն քո, եւ յառաջին վարդապետսն զրեցաք զՄեսրոպ»<sup>212</sup>:

Իսկ արդի բանասէրներէն Հ. Յ. Թորոսեան եւ Ակինեան կը զիմեն աւելի զիւրին ու վճռական միջոցի՝ սրբազրելու բնագիրը՝ իրենց հասկցած ձեւով: Թորոսեան կ'առաջարկէ «Ակումիտ անուն կոչելոյ» բացատրութիւնը կարգաւ այսպէս. «Ուստի եւ հրաման ելանէր վայելուչ մեծարանօք զսուրբն յարմունիս կոչելոյ»<sup>213</sup>: Ակինեան աւելի յղկելով. «զՍուրբն յարմունիս յաղարկելոյ»<sup>214</sup>:

Ճիշտ է որ այս սրբազրութիւններով Կորիւնի բնագիրը կը գառնայ աւելի տրամաբանական եւ մեզի համար աւելի հասկանալի շարադրութիւն. բայց անհասկանալի կը մնայ թէ ինչպէս յարմունիս կոչելոյ կամ յաղարկելոյ պարզ խօսքերը կրցած են խաթարուիլ՝ երեւան հանելով Ակումիտ անուն կոչելոյ տարօրինակ ընթերցումը: Միւս կողմէ, արդէն Մ. Խորենացի իսկ Կորիւնի ներկայ բնագրին տեղեակ ըլլալը կը յայտնէ Ակումիտ տիտղոսին տեղ՝ Եկղեխատիկոս պատուանունը ստեղծելով: Բայց չկարենալով համոզուիլ որ Մաշտոց Ակումիտ տիտղոսը Բիւզանդիոն երթալէն առաջ ստացած ըլլայ, ինչպէս Կորիւնի բնագիրը յայտնի կերպով կը գրէ, ան Բիւզանդիոնի մէջ Պատրիարքին ձեռքով եւ ձեռնադրութեամբ տալ կու տայ: Այս բոլորը ցոյց կու տան թէ Կորիւնի բնագիրը պէտք ունի մեկնութեան մը, առանց սակայն զայն խանդարելու:

204. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ. էջ 68:

205. STEIN E., I, 531, n. 119; II, 289. – ԳԻՒՍՏԵՐՈՒՄ, Անդ, էջ 39–43. – Գիտերբող կը վարանի որդիւն «տեղեկութեանց նուազութեան պատճառաւ» թէ Հայաստանի Կոմէսը, նման ուրիշ սահմանադրւած կոմէսներու ունէ՞ր բանակ իր իշխանութեան ներքեւ՝ թէ ոչ: Մեզի համաձայն, Կորիւնի վկայութիւնը՝ թէ ան Հայոց սպարապետն էր, ցոյց կու տայ որ իսկապէս ան ալ ուրիշ սահմանադրւած կոմէսներու նման՝ զինուորական կառավարիչ մըն էր, եւ բանակ ալ ունէր. ասոր վրայ աւելցնենք նաեւ Մ. Խորենացիի վկայութիւնը թէ՛ Անատոլիոս Կարնոյ քաղաքը ամբարցուց եւ հոն պահակազօրքը դնեղեց, ու քաղաքն ալ Թէոդոսուպոլիս կոչեց:

206. Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ, Պատմ. Գ, խէ: ԵԶՆԻԿ ԵՐԵՅ, Նկարագիր կարգաց, Հանդ. Ամս., ԾԱ (1937), էջ 519:

207. ՀԻՒՐԵՄՍԻՆ, Հին Հայոց Տեղւոյ անունները, (Թրգ. Հ. Բ. Պիլէդիկեան), Վիեննա, 1907, էջ 31/32, Ծն. 2:

208. ԵՂԻՇԷ, Պատմ. էջ 174–175: «Առ այդ մի որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնէից որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թըլուստութեան ժամանակին այլն այն սպարապետ էր ստորին Հայոց եւ հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից»:

209. Թէոդոսուպոլիս լինութեան մասին պատմական աղբիւրներու մէջ իրարու հակասող տեղեկութիւններ կան: Այսպէս «Յաղագս հայկական իրաց» կոչուած պատմութեան մէջ (գործ է. գարու), քաղաքին կառուցումը վերադրուած է Թէոդոս մեծին (379–395), որուն օրով Հայաստան երկուքի բաժնուեցաւ: Պրոկոպիոս (Չ. գարու) կը վերադրէ Թէոդոս Բ. (408–450), կարծելով թէ Հայաստանի երկուքի բաժանումը տեղի ունեցած ըլլալը:

լայ ա'յս Թէոդոսին ատեն: Իսկ Մ. Խորենացի նոյն քաղաքի կառուցումը կը վերադրէ Անատոլիոս զօրավարին, որ Մաշտոցի Կ. Պոլսէն վերադարձին, Թէոդոս կայսրէն եկած հրամանին վրայ, Հայաստան կու դառնէ Կարնոյ քաղաքի գերբը յարմար գտնելով՝ զայն կամրացնէ պարիսպներով եւ աշտարակներով. հոն կը դնեղեց պահակազօրքը եւ քաղաքին անունը փոխելով՝ Թէոդոսուպոլիս կը կոչէ, ի յիշատակ Թէոդոս Բ. կայսեր: Մ. Խորենացիի վկայութիւնը աւելի հաւանական կը տեսնուի. որովհետեւ Թէոդոս Մեծի օրով եղած Հայաստանի բաժանման ատեն, Յունաց բաժինը կը կառավարուէր հայ թագաւորով եւ հայ իշխաններով, եւ հարկը չէր զգացուէր հոն յունական բանակ պահելու: Բայց Արշակ Թագաւորի մահէն յետոյ, երկիրը կառավարեց Գաղաւտ կամաւարական. իսկ երբ

ան ալ անցաւ Պարսից բաժինը, այլեւս երկիրն իշխանութիւնը չյանձնուեցաւ հայերու, այլ հոն զրուեցան յոյն կոմէսներ, որոնցմէ առաջինը կը թուի թէ եղած ըլլայ մեր Անատոլիոս զօրավարը, սկսեալ 415էն: Պարսկական պատերազմը որ 420ին տեղի ունեցաւ, յայտնի կերպով ցոյց տուաւ թէ Կարնոյ քաղաքը՝ որ Հայաստանի սահմանին վրայ, արքայական մեծ ճամբու անցքին, բիւզանդական հոգերու մուտքն էր, պէտք էր ամրացնել. եւ Անատոլիոս այդ դրոճը զուլիս հանեց:

210. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ. էջ 64:

211. Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ, Պատմ. Գ, ծէ. (էջ 536):

212. Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ, Պատմ. Գ, ծէ. (էջ 535):

213. Հ. Յ. Թորոսեան, Անդ, էջ 472:

214. ՏԵՍՏԱՆԻԱՆ, 196:

Կորիւնի համաձայն, Անատոլիոս իշխանը Թէոդոս կայսեր դրել է ետք, կայսրէն հրաման կու գայ որ Մաշտոց Ակումիտ տիրոջ ունենայ: Ինչո՞ւ Հայաստանի մէջ կը տրուի այս տիրոջ եւ ի՞նչ էր անոր արժէքը: Թէոդոսեան կանոնադրքի մէջ (Գ. հատ. Գիրք 26, Յօդ. 1-2) կրօնաւորներու մասին խօսելով, կ'ըսուի թէ կրօնաւորները պէտք է բնակին անապատներու եւ մենաստաններու մէջ. բայց կայսերական առանձնաշնորհումով մը՝ թոյլ կը տրուի որ անոնք կարենան քաղաք մը տնել: Օրէնքը 392ին դրուած է, եւ 420ի առաջինները Անատոլիոս տակաւին հարկը կը զգար կայսեր իմաց տալու թէ Մաշտոց՝ հայ միայնակեաց վարդապետը Պոլիս երթալու կամք ունի, որպէսզի արտօնուի անոր թէ՛ քաղաքի մուտքը եւ թէ՛ մանաւանդ պետական կամ արքունի ծախսով ճամբորդութեան առանձնաշնորհումը տրուի: Արդ, եկեղեցական պատմութեան ծանօթ է որ 400ի առաջինները, Պոլիս հաստատուած էր Աղեքսանդր անունով երեւելի վանական մը, որ Ս. Մինաս Եկեղեցւոյ մօտերը իր 24 աշակերտներով վանք մը հիմնած էր, որ քիչ առեւնէն թէ՛ ծաւալած եւ թէ՛ մեծ համբաւ ստացած էր Ակումիտ տիրոջ ժառանգելով, իրրեւ Անֆուն կրօնաւորներ: Անոնք իրենց խնամակրօն վարքով, բացարձակ աղքատութեամբ եւ ողորմածութեան դործերով՝ սիրելի եղած էին Ժողովուրդին եւ պալատականներուն: Ահա այս կրօնաւորներու անունով է որ Մաշտոց ալ, կայսեր հրամանով, Ակումիտ կը կոչուի. եւ այդ անունով կը ստանայ անշուշտ անոնց յատուկ առանձնաշնորհումները. եւ հրաման կը տրուի իրեն հասարակաց կամ պետութեան փոխադրական միջոցներով Բիւզանդիոն մեկնել, հոն արքունի ոռճիկ ստանալ եւ վերադարձին՝ արքունի դեսպակով ճամբորդել: Առանձնաշնորհումներ, որոնցմէ ոչ մէկը պիտի կարենար վայելել, իրրեւ հայ պարզ վանական մը, եթէ Աղեքսանդրի վանականներու Ակումիտ տիրոջ ստացած չըլլար: Հետեւաբար լաւագոյն է պահել Կորիւնի ներկայ բնա-

դիրը. որովհետեւ դժուար է որ ձեռագրական խաթարումով «Ակումիտ անուն կոչելով» ընթերցումը հետզհետէ ձեւանար նախնական պարզ «յարֆունիս յուղարկելով» բառերէն: Մանաւանդ որ վերոյիշեալ վանականները, 427ին, Կ. Պոլսոյ Ժողովքի մը մէջ դատապարտուեցան, տեղական եկեղեցական իշխանութեան նախնաձի եւ հակառակութեան հետեւանքով. որով եւ այդ թուականէն ետք՝ Մաշտոցին այդպիսի տիրոջ մը չատ ալ սրբելի պիտի չըլլար:

Այսպիսի տիրոջ ուժով օժտուած, Մաշտոց ճամբայ ելաւ եւ նախ հանդիպեցաւ Մելիտինէ, ուր իր աշակերտներու խումբը՝ Ղեւոնդի առաջնորդութեան տակ՝ յանձնեց Ալիակ եպիսկոպոսին. իսկ հետը առնելով Դերջանի Գինդ եպիսկոպոսը եւ քանի մը աշակերտներ, մեկնեցաւ Բիւզանդիոն, պետական կառքով<sup>215</sup>: Մելիտինէն Պոլիս արքունի ճամբան ուղիղ դժով կ'երթար, Կեսարիա - Գաղատիա - Նիկիոյ իշխան քաղաքներուն վրայէն: Պոլիս հասնելով՝ ներկայացաւ թագաւորներու, այսինքն Թէոդոս եւ Պուլքեր երկու թագակիցներուն, ինչպէս նաեւ Պատրիարքին՝ Ատտիկոսի. Մաշտոց անոնց կողմէ իրրեւ պետական եւ եկեղեցական հիւր ընդունուեցաւ, ձրի բնակութիւն եւ կերակուր ըս-

215. Կորիւնի բնագիրը ունի «եւ ելեալ յանարին զիմուսական», որ բանասէրներու համար խնդրոյ առարկայ եղած է: Թորոսեան զայն փոխած է «եւ ելեալ յուղի»: Ալիսեան ուղղած է «եւ ելեալ յարֆունատուր զեսպակս»: Արեւեան սրբագրած է «եւ ելեալ յանդրուարն զիմուսական»: Վերջին սրբագրութիւնը աւելի հաւանական կը թուի մեզի: Վասնզի զիմուսական անյայտ բառը, յունարէն  $\delta\eta\mu\acute{o}\sigma\tau\omicron\varsigma$  բառին տառադարձութեամբ՝ դարձած է հայերէն, ալիան անհայտ անհայտ մը, որ կը նշանակէ պետական, հասարակաց: Ուստի դժուար է որ խաթարումով երեւան ելլէր: Յանարին բառը կրնայ Յանդրուար բառէն ծագած ըլլալ, եթէ փոխաբերաբար չէ դործածուած հասարակաց կառքին համար, որ ներկայումս ձիով իրրեւ արի միջոց մը ճամբորդութեան, կառքը անարի միջոց մը կոչուած ըլլայ:

տանալով: Զատկական տօնը կատարելէ ետք, կը դրէ Կորիւն, դարձեալ կը ներկայանայ կայսեր՝ իր խնդիրքը առաջարկելու. կը ստանայ դրաւոր հրամանագիր՝ որ կարենայ Յունաց բաժնի Հայաստանի մանուկներուն հայերէն լեզուն սորվեցնել: Ապա իր յարգանքը մատուցանելով «ծիրանափառ օգոստականաց» այսինքն՝ Թէոդոս կայսեր եւ Պուլքեր թագուհիին, ինչպէս նաեւ Ատտիկոս Պատրիարքին, իր ընկերներով ճամբայ կ'ելլէ, դարձեալ արքունի դեսպակով կամ կառքով: Եւ նոյն արքունական ճամբով կը հասնի Ժամադէր կողմերը, այսինքն Յունաց բաժնի Հայաստանը ու կը ներկայանայ Հայոց սպարապետին, որ Անատոլ իշխանն էր, տեղւոյն զինուորական կառավարիչը կամ կոմէսը: Կայսերական հրամանագիրը տեսնելով ան հրահանգ կու տայ որ ամէն կողմէն մանուկներ հաւաքուին, զպրոցներ հիմնուին, պետական ոռճիկ սահմանելով անոնց, մինչ Մաշտոց կը ջամբէ անոնց հայերէն գրերու ուսուցումը: Թէոդոս կամ նոյն իսկ Ատտիկոս Պատրիարքը Մաշտոցի յանձնած էր Բարբարիանոս կոչուած աղանդաւորները ուղղութեան բերելու գործը. Մաշտոց իր ստացած հրահանգը կը գործադրէ՝ ջանալով կարգի բերել զանոնք: Եւ քաղաքական իշխանութեան վրայ յեցած՝ ձեռք կ'առնէ նոյն իսկ պատժական միջոցներ անոնց հանդէպ որ

կը յամառին. իսկ ամէնէն անդեղները՝ աղուեսադրոյժ կնքել տալով՝ աքսորել կու տայ երկրէն: Եւ յետ լրացնելու իր պաշտօնը, հետը առած սուրբ Հայրերու բազմաթիւ մատեաններ, կը վերադառնայ Մեծ Հայք, հոն իրեն փոխանորդ թողլով Ենովք եւ Դանան անունով երկու աշակերտները, իրր տեսուչ կամ առաջնորդ նոր հիմնուած հայ դպրոցներուն եւ վանքերուն:

Այս ձեւով Յունաց բաժնի Հայաստանը, որ հայ Կաթողիկոսի կեդրոնական իշխանութենէն զրկուած եւ ենթարկուած էր Կեսարիոյ մետրապոլիտութեան, եւ եկեղեցականները ստիպուած էին յունական լեզուն եւ ծէսը որդեգրել, ի սպառ օտարանալու դատապարտուելով, Մաշտոցի եւ Ս. Սահակի ջանքերով դարձեալ կը կապուի հայ եկեղեցւոյ կեդրոնական իշխանութեան՝ դոնէ լեզուով ու ծէսով: Պէտք է ըսել որ Թէոդոս կայսեր եւ Ատտիկոս Պատրիարքին ալ կողմէ եղած է որոշ լայնախոհութիւն մը՝ Ս. Սահակի եւ Մաշտոցի խնդիրքն ընդունելու մէջ: Եւ այս փոխադարձ գործակցութեան մէջ յատակ կը տեսնուի եկեղեցական այն սերտ յարաբերութիւնը, որ յետագային խրդուելով պիտի քանդէր Մեսրոպի եւ Սահակի փրկարար գործը:

(Շար. 5)

Հ. ՊՈԴՈՍ ԱՆԱՆԵԱՆ